
ԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ
(Լալիկ Խաչատրյանի ծննդյան 60-ամյակի առթիվ)



Լրացավ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լալիկ Մնացականի Խաչատրյանի ծննդյան 60 և գիտամանկավարժական գործունեության 35-ամյակը:

Լ. Խաչատրյանը 1973 թ. ավարտել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետը և զբաղվել ուսուցչությամբ հայրենի Գավառ քաղաքում: Մանկավարժական աշխատանքին զուգահեռ զբաղվել է գիտահետազոտական աշխատանքով և 1981 թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսություն՝ նվիրված հայերենի բառային կազմի պատմական իմաստաբանությանն ու բառերի ձևաբանական արժեքի տարժամանակյա փոփոխություններին:

1983-1985 թթ. սովորել և ավարտել է Մոսկվայի Օտար լեզուների պետական դասընթացները և ստացել գերմաներենի մասնագետի որակավորում: 1985 թ. մասնակցել է ՀՀ մանկավարժական ընկերության հայտարարած մրցույթին. նրա ներկայացրած աշխատանքն արժանացել է մրցանակի ու հրատարակվել առանձին գրքով:

1982 թ. աշխատանքի է անցել մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետում՝ դասավանդելով գրաբար, ժամանակակից հայոց լեզու, լեզվաբանություն: Գրեթե քառասուն տարի պրոֆ. Լ. Խաչատրյանը մանկավարժական բնագավառում է. դա բարոյական պարտք է, որ նա վերադարձնում է դպրոցին և բուհին:

Լ. Խաչատրյանը 1997 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ նվիրված ժամանակակից հայերենի բառակապակցությունների իմաստաբանությանը, մասնավորապես դարձվածքների բաղադրիչների ձևաբանական տարարժեքությանը, և ստացել բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2003-ից պրոֆեսոր է: 2001-ից ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչն է: Պաշտոնավարության առաջին իսկ տարիներից ձեռնամուխ է եղել մասնագիտական առարկաների, ծրագրերի, թեմատիկ պլանների վերանայման ու վերակառուցման աշխատանքներին. հատուկ ուշադրություն է դարձրել բանասիրական ֆակուլտետում գրաբարի դասավանդումը բարելավելուն, իսկ հարակից ֆակուլտետներում հիմնովին վերանայվել են հայոց լեզվի գործնական ուսուցման ծրագրերն ու դրանք իրականացնելու խնդիրները: Մանկավարժական համալսարանում և նրա շրջանակից դուրս հեռուստաթերթով իրականացնում է լեզվական հիմնավորված քաղաքականություն:

Գիտական հետաքրքրության շրջանակները ներառում են՝

ա) Հին հայերենի պատմական ձևաբանություն և բառակապակցական իմաստաբանություն: Հայ իրականության մեջ առաջինը Լ. Խաչատրյանն է զբաղվել բառերի իմաստաարժեքային պատմական փոփոխությունների գիտական նկարագրությամբ՝ ինչպես համաժամանակյա,

այնպես էլ տարժամանակյա կտրվածքներով («Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ», Ե., 1985): Նրա ուսումնասիրությունների միջոցով հայ լեզվաբանական տերմինաբանությունը համալրվել է նորաստեղծ միավորներով, ինչպես՝ խոսքիմասային մասնակի կամ լիակատար փոխանցում, խոսքիմասային տարարժեքություն, խոսքիմասային երկարժեք, եռարժեք, քառարժեք բառեր, ներխոսքիմասային փոխանցումներ, միջխոսքիմասային փոխանցումներ և այլն: Խոսքիմասային տարարժեքության երևույթի գիտական նկարագրությունն ամբողջացնելու համար հեղինակն այն դիտարկել է կայուն կապակցությունների կամ դարձվածքների իմաստային կառուցվածքում: Նա ցույց է տվել երևույթի դրսևորման ինչպես ընդհանրությունները, այնպես էլ տարբերությունները ազատ և կայուն կապակցությունների հարթություններում («Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում», Ե., 1996):

բ) Բառարանագրություն: Խոսքիմասային փոխանցումների և տարարժեքության քննությունն ավարտելուց հետո հեղինակը ձեռնամուխ է եղել գրաբարի տարարժեքության բառարան կազմելու աշխատանքներին: Նախ՝ 1998 թ. հրատարակել է «Գրաբարի տարարժեք բառերի բացատրական բառարանը», որտեղ մատուցվում են գրաբարի տարարժեք բառերը՝ համապատասխան ձևաբանական արժեքներով և բառիմաստային բացատրություններով: Սույն բառարանը հայ իրականության մեջ գրաբարին նվիրված առաջին բացատրական բառարանն է հանրահայտ ՆՀԲ-ից շուրջ 150 տարի անց: Աշխատանքը նվիրված է Գ. Ավետիքյանի, Խ. Մյուրմեյանի, Մ. Ավգերյանի հիշատակին և նրանց քանքարաշատ վաստակի՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» հիմնարար աշխատանքի տպագրության 150-ամյակին: Հեղինակն այնուհետև կազմում է նոր, ընդարձակ բառարան՝ բնագրային համապատասխան վկայություններով: 2003 թ. նա հրատարակում է «Գրաբարի բացատրական բառարան. ձևաբանորեն տարարժեք բառեր» աշխատությունը, որը համալրված է նոր բառերով՝ քաղված մատենագրական նորահայտ երկերից (որոնց նյութը դուրս էր մնացել ՆՀԲ-ի հեղինակների ուշադրությունից) և Նորայր Բյուզանդացու վերակազմած «Նոր հայկազեան բառարանից»:

Կարծում ենք՝ խոսքիմասային փոխանցումներին և խոսքիմասային տարարժեքությանը նվիրված նրա ուսումնասիրությունները և բառարաններն ամբողջացնում են իր իսկ մշակած խոսքիմասային տարարժեքության և տեղաշարժերի տեսությունը: Այդ ուսումնասիրությունները նոր ուղիներ են բացում հետագա ուսումնասիրողների համար. նրա մշակած տեսությամբ մեզանում պաշտպանել են մեկ տասնյակից ավելի ատենախոսություններ:

գ) Արդի հայերենի տեսություն: Լեզվի տեսության մեջ կան որոշակի հարցեր, որոնք առանձին ուսումնասիրության կարոտ են: Դա մասնավորապես վերաբերում է լեզվական կադապարներին և կադապարավորման տեսությանը: Այս հարցերը, անշուշտ, արժանացել են հայագետների, մասնավորապես ակադ. Գ. Ջահուկյանի ուշադրությանը, սակայն պրոֆ. Լ. Խաչատրյանը փորձել է խնդրո առարկային յուրովի մեկնաբանություն տալ՝ նկատի ունենալով բուհական համակարգում, մասնավորապես մագիստրատուրայում դասավանդվող առարկայի կարևորությունը:

2011 թ. հրատարակել է «Բառակազմական և ձևաբանական կադապարները ժամանակակից հայերենում» մենագրությունը, որը լեզվական միավորների ձևայնացված նկարագրության հաջողված փորձերից է, կարող է նպաստել կադապարավորման տեսության

արևատավորմանը, ինչպես նաև որոշակի պատկերացում տալ լեզվի կառուցվածքային միավորների ձևայնացված նկարագրության և դրանց մոդելավորման վերաբերյալ:

դ) Դասագրքաստեղծ աշխատանք: Տարիներ շարունակ գրաբար և ընդհանուր լեզվաբանություն դասավանդելով բանասիրական ֆակուլտետում՝ հեղինակը զգացել է նոր դասագրքերի պահանջը և նոր մեթոդաբանությամբ ու նոր ուսումնասիրությունների լույսի ներքո կազմել է դասագրքեր: 2004 թ. Գ. Թոսունյանի հետ հրատարակել է «Գրաբարի դասագիրք» աշխատությունը, որն առ այսօր գործում է ոչ միայն մանկավարժական համալսարանում, այլև հանրապետության տարբեր բուհերի համապատասխան ֆակուլտետներում: 2008 թ. նա հրատարակել է «Լեզվաբանության ներածություն» ուսումնական ձեռնարկը՝ հասցեագրված մանկավարժական բուհերի հումանիտար ֆակուլտետների ուսանողներին: Այդ աշխատանքում հաշվի են առնված ինչպես ռուսական իրականության մեջ գործող դասագրքերի փորձը (Ռ. Բուդաղով, Ա. Ռեֆորմատսկի, Օ. Շիրոկով, Վ. Կոդուխով, Բ. Գոլովին, Յու. Մասլով, Յու. Ստեպանով, Ֆ. Բե-րեզին և ուրիշներ), այնպես էլ ժամանակակից հնդեվրոպաբանության ակնառու նվաճումները (Թ. Գամկրելիձե, Վյաչ. Բվանով): 2005 թ. ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի աշխատանքային խմբի հետ կազմել է հանրակրթական դպրոցի հայոց լեզվի և գրականության առարկայական ծրագրերն ու չափորոշիչները: Ոչ միայն Լ. Խաչատրյանի, այլև մանկավարժական համալսարանի հաջողությունն է, որ Ֆ. Խլղաթյանի համահեղինակությամբ գրված «Հայոց լեզու. VII դասարանի համար» դասագիրքը մրցույթով դպրոց մտնելու իրավունք է ստացել:

ե) Ընդհանուր լեզվաբանական ուսումնասիրություն: Հնդեվրոպական առանցքային որոշ լեզուներին տիրապետելը, ինչպես նաև տարբեր կառուցվածքի լեզուների փաստական նյութի իմացությունը հեղինակին հնարավորություն են տվել կազմելու «Հետաքրքրաշարժ լեզվաբանություն» աշխատանքը, որտեղ յուրահատուկ պատումների ձևով մատուցվում են գրաբարյան բառերի անթեղված իմաստները, փոխառություններն ու նրանց կրած իմաստային զարգացումները: Գրքում տրվում են նաև հատկանունները՝ նախնական (ստուգաբանական) նշանակություններով ու բացատրվում են դրանց կրած իմաստային անցումները: Սույն աշխատանքը ընթերցողին հետաքրքրական աշխարհ է տանում տարբեր լեզուների բավիղներով, որոնք թեկուզ և ոլորապտույտ, սակայն նույն ընթերցողին բերում են հայերենի իմացության դաշտ: «Հետաքրքրաշարժ լեզվաբանությունը» ոչ միայն գիտատեսական, այլև մանկավարժական բընույթի ուսումնասիրություն է, որը կարող է օգտակար լինել ինչպես աշակերտներին և ուսանողներին, այնպես էլ դպրոցի և բուհի մասնագետներին, ընդհանրապես հայոց լեզվի հարցերով հետաքրքրվողներին:

զ) Հասարակական գործունեություն: 1997-2003 թթ. աշխատանքային այցով պարբերաբար մեկնել է Միդիայի Արաբական Հանրապետություն և դասավանդել Հալեպի Հայագիտական դասընթացներում՝ իբրև գրաբարի ու հայ հին գրականության մասնագետ: Հալեպահայ ուսանողների շրջանում սերմանել է սեր ու նվիրում մայրենի լեզվի արժեքների հանդեպ: Տեղի «Գանձասար» հանդեսում պարբերաբար հրապարակել է հոդվածներ՝ նվիրված լեզվի հայապահպանության խնդիրներին, «Աստվածաշնչի» մեկնաբանությանը, հայ հին գրականության հուշարձանների արժեքներին և այլն: Կազմակերպել է Դամասկոսի հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման աշխատանքները, նրանց հետաքրքրող թեմաների շուրջ հանդես եկել հրապարակային դասախոսություններով:

2007 թ. մեկնել է Իրանի Իսլամական Հանրապետություն. այցելության նպատակն էր ծանոթանալ տեղի հայկական դպրոցների առարկայական ծրագրերին և դասագրքերին, նրանց իրազեկել Հայաստանում կատարված կրթական բարեփոխումների մասին և ուսումնամեթոդական օգնություն ցուցաբերել տեղի մանկավարժներին: Սպահանի դպրոցների ծրագրերի և դասագրքերի վերաբերյալ առաջարկություններով հանդես է եկել Թեհրանի «Ալիք» և Բեյրութում հրատարակվող «Ազդակ» թերթերում:

Միյուռքի դպրոցներին մատուցած ծառայությունների համար արժանացել է Ֆրիտյոֆ Նանսեն հիմնադրամի ոսկե մեդալի, իսկ գիտական վաստակի համար՝ ՀՀ ԿԳՆ և Լեզվի պետական տեսչության պատվոգրերի, ինչպես նաև «Հակոբ Մեղապարտ» մեդալի:

Լ. Խաչատրյանը ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 019 և Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ում գործող 020 մասնագիտական խորհուրդների անդամ է: Նրա անմիջական ղեկավարությամբ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան են ստացել 12 հայցորդ և ասպիրանտ: Ընդ որում, նրա ասպիրանտներից շատերը մշակել ու խորացրել են խոսքիմասային փոխանցումների և խոսքիմասային տարարժեքության թեման, որի տեսության առաջին մշակողը մեր իրականության մեջ, ինչպես նշել ենք, Լ. Խաչատրյանն է:

Պրոֆ. Լ. Խաչատրյանը ղեկավարում է այն ամբիոնը, որի վարիչներն են եղել գիտնական-մանկավարժներ Ա. Ղարիբյանը, Ա. Աբրահամյանը, Վ. Քոսյանը: Շարունակելով իր անվանի նախորդներից ժառանգած ավանդները՝ Լ. Խաչատրյանը կազմակերպել է հանրապետական երեք տարբեր գիտաժողովներ՝ նվիրված ակադ. Ա. Ղարիբյանի ծննդյան 110, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Աբրահամյանի ծննդյան 90 և պրոֆ. Վ. Քոսյանի ծննդյան 80-ամյակներին: Ընդ որում, պրոֆ. Լ. Խաչատրյանի նախաձեռնությամբ հայոց լեզվի և դասավանդման մեթոդիկայի ամբիոնը անվանակոչվել է հիմնադիր-վարիչի՝ ակադ. Ա. Ղարիբյանի անունով: Նրա կազմակերպած գիտաժողովները յուրահատուկ հարգանքի տուրք են՝ նվիրված հայագիտության և հայ մանկավարժության երախտավորների անմոռաց հիշատակին:

Լ. Խաչատրյանն անխոնջ մտավորական է և գիտության եռանդուն կազմակերպիչ: Նա հրատարակել է շուրջ ութսուն գիտամեթոդական աշխատություն, ունի մի շարք ծրագրեր, որոնց իրականացումը, կարծում ենք, հեռու չէ. մասնավորապես նրա ծրագրերի մեջ են մտնում «Ընդհանուր լեզվաբանության դասընթաց» կազմելու աշխատանքը, գրաբարում ստորադասական կապակցության եղանակների քննությունները, ինչպես նաև արդեն ավարտված «Գրաբարի ուսումնական բառարանը» հրատարակելու շնորհակալ գործը: Եթե գիտական այս վաստակին ավելացնենք մանկավարժ-դասախոսի՝ նրա առինքնող կերպարը՝ դասերը հատաքրքիր վարելու հմտությունը, առարկաներին տիրապետելու կարողությունը, մանկավարժական տակտն ու վարպետությունը, ուսանողների հետ վարվելու ծնողական հոգատարությունը, ապա, կարծում ենք՝ կամբողջանա իսկական մտավորականի ու գիտնականի, մանկավարժի ու հայրենասեր քաղաքացու նկարագիրը:

Պրոֆ. Լ. Խաչատրյանից գիտությունն ու մանկավարժությունը շատ սպասելիքներ ունեն. մաղթենք նրան առողջություն, ստեղծագործական անսպառ կորով ու եռանդ՝ նորանոր գիտական բարձունքներ նվաճելու ակնկալությամբ:

ՄԻՐԶՈՅԱՆ Լ. Ա.

Մանկավարժական գիտությունների թեկնածու